

ՀԱՅՈՑ ԳՈՐԳԵՐԻ «ՏԱՊԱՍՏԱ» ԿՈՉՈՒԱԾ ՏԵՍԱԿԻ ՄԱՍԻՆ

Աշխունջ Պօղոսեան

Նիկողայոս Մառը, քննութեան առնելով խալիֆաթի տարածքում յատկապէս բարձր գնահատուող «ոտքի համար» նախատեսուած հայկական փոքրաչափ գորգերի մասին արաբ աշխարհագիր ալ-Իդրիսիի հաղորդումը, նշել է, որ դրանք պէտք է նոյնացնել ԺԱ դ. վերաբերող վրացական մի աղբիւրում յիշատակուած «հայկական տաբաստո»-ների հետ:[1]

Ակադեմիկոս Բ. Առաքելեանը Իդրիսիի նշած գորգերը նոյնպէս համարել է տապաստ *կամ* տապաստակ: *Նա գտնում է, որ դրանք օգտագործուել են աղօթքի ժամանակ ու միաժամանակ՝ որպէս ուտելիք տեղադրելու գետնատարած սփռոցներ, յարմար էին նաեւ առեւտրական քարաւանների ուղեւորների համար:*[2] *Որպէս այդօրինակ եզրայանգումների հիմնաւորում՝ նա վկայակոչում է Ե-Զ դդ. արուած Յովհան Ոսկեբերանի հայերէն թարգմանութիւնից մի քաղուածք, որում ասուած է «ընթրեաց առնեն եւ տապաստակս եւ բարձս բազումս նմին պատրաստականս»*[3]*:*

Տապաստա *բառն, ըստ Ստ. Մալխասեանցի, նշանակում է սփռոց, գորգ, օթոց, որի վրայ նստում են ուտելու ժամանակ:*[4]

Տապաստա *հասկացութեան մասին պատկերացում կազմելու համար պէտք է կարեւորենք նաեւ դրա յունարէն՝* tapis, *ու լատիներէն՝* tapes, *նախնական ձեւերը, որոնց տարբերակները գործածական են եւրոպական մի շարք լեզուներում (օրինակ՝ իտալերէնում՝* tappesto, *գերմաներէնում՝* teppich *եւ այլն) ու բոլորն էլ նշանակում են գորգ:*[5]

Հայոց մէջ գորգագործական մշակոյթը յայտնի էր աւելի վաղ ժամանակներից, քան թարգմանական գրականութեան մէջ յունարէն խնդրոյ առարկայ բառի յայտնուելն էր, ուստի եւ ենթադրելի, որ հայերէնում եղել են գորգ բառի տարբերակներ ու հոմանիշեր: Կոնկրետ գորգ *բառի ծագումնաբանութեան առումով մենք կարեւորում ենք յատկապէս խեթերէնից յայտնի* կուրկաս[6]*, հայերէն* ձունձ, ձորձ *բառերը: Դրանցից բացի, կային նաեւ այնպիսի անուանումներ, որոնցով գորգերի տեսակները տարբերակւում էին՝ ըստ գործածման ոլորտների:*

Խնդրոյ առարկայի առումով յատկանշական է այն, որ այդ սկզբունքը կար նաեւ զարգացած միջնադարեան ժամանակաշրջանի արաբական միջավայրում: Ըստ այդմ՝ ընդունուած էին յատուկ գորգ եւ ուղեգորգ՝ գորգ, որի վրայով, ըստ վարուելակարգի, չէր թոյլատրւում քայլել, աղօթքի գորգ, ծածկոց եւ այլ տեսակի գորգեր մատնանշող հասկացութիւններ, որոնցից իւրաքանչիւրն ունէր որոշակի անուանում՝ Նամատ, Մահֆուր *եւ այլն:*[7]

---

[1] **Н. Марр**, Ани, ес., 1939, ст. 237-238.

[2] **Բ. Առաքելեան**, *Քաղաքները եւ արհեստները Հայաստանում IX-XIII դարերում*, հտ. 2, Եր.,1964, էջ 293:

[3] **Բ. Առաքելեան**, նոյն տեղում

[4] **Ստ. Մալխասեանց**, *Հայերէն բացատրական բառարան*, հտ. Դ, Եր., 1945, էջ 375

[5] **Տե՛ս Մանուէլ վրդ. Քաջունի**, *Բառգիրք արուեստից եւ գիտութեանց եւ գեղեցիկ դպրութեանց*, հտ. երկրորդ, Վենետիկ-Ս. Ղազար, 1892, էջ 699:

[6] **Г. Капанцян**, Общие элементы между хетским и армянским языком.- Историко-лингвистические работы, Ереван, 1957, ст. 354- 355.

[7] **А. Мец**, Мусульманский ренессанс, М.-Л., 1973, ст. 365.

Հայ իրականութեան մէջ այդ նոյն ժամանակաշրջանում գորգերի տարբերակման ասպարէզում գործածւում էին նաեւ Ծատրուան, Տապաստակ, Արկանելի, Բազմական եւ այլ անուանումներ, որոնցից իւրաքանչիւրը վերաբերում էր գործածման որոշակի ոլորտով բնութագրուող կոնկրետ մի տեսակի:[8]

Տապաստակ տեսակի գորգերի ձեւի ու գործածման ոլորտների մասին պատկերացում կազմելու համար մենք ելակէտային ենք համարում սկզբնաղբիւրի յիշատակած ոտատակի կամ ոտքի գորգ հասկացութիւնը, որը, մեր կարծիքով, կարող է վերաբերի միայն հայոց կենցաղում մինչ օրս էլ գործածուող ուղեգորգ ընդհանրացուած անուանումով տարբերակուող երկարաւուն ու նեղ գորգերին:

Դրանց գործածման ոլորտն ու ձեւը փաստօրէն նոյնն է, ինչ որ եղել է Իդրիսիի ժամանակաշրջանում. փռում են թախտին, մահճակալի կողքին, սենեակի բանուկ մասերում՝ միջանցքներում, ինչպէս նաեւ, հացկերոյթի ժամանակ գետնին փռուած սփռոցի եզրերին եւ այլն: Կարծում ենք, որ այդպիսի մի գորգի մաս են կազմել նաեւ Անիի արքայական ապարանքի պեղումներից յայտնաբերուած թախտին կպած գորգի մնացուկները: Ընդ որում, Յովսէփ Օրբէլին, նկարագրելով այդ մնացորդները, գրում է, որ վերոյիշեալ թախտը «մկդակուած էր եղել բամբակեայ վերմակով եւ գորգով»[9]: Կարծում ենք, որ այդօրինակ գորգերի մասին պատկերացում տալու առումով ուշագրաւ սկզբնաղբիւր է ԺԱ դ. վերաբերող Կարսի Աւետարանի խորանազարդերից մէկի նեղ ու երկարաւուն, խոշոր շեղանկիւնազարդերով գեղազարդուած գորգապատկերը: Բացի երկրաչափական ձեւից, այն ինչ-որ չափով ներկայացնում է նաեւ Բագրատունիների ժամանակաշրջանին վերաբերող ուղեգորգերի գեղազարդման համակարգի մանրամասներ:[10]

ԺԸ-Ի դդ. տապաստակների կամ ուղեգորգերի առումով տիպական են յատկապէս՝ Արցախի ու Սիւնիքի գորգագործական կենտրոններին բնորոշ ուղեգորգերը: Նկատի ունենալով, որ յիշատակուած տարածաշրջանները դասւում են պատմական Հայաստանի գորգագործական մշակոյթի առաւել յայտնի կենտրոնների թւին, ու որոնցում յատկապէս պահպանուած են հայոց գորգագործական մշակոյթի տեխնիկատեխնոլոգիական եւ սոցիոնորմատիւ բնոյթի աւանդոյթները՝ մենք կարեւորում ենք դրանց նշանակութիւնը խնդրոյ առարկայ հարցի ուսումնասիրման գործում:

Տեխնիկատեխնոլոգիական առումով, այս տեսակի գորգերը հայոց գորգագործական մշակոյթի համակարգում բնորոշւում են միջին բարձրութեան խաւով ու հանգոյցների միջին խտութեամբ: Ըստ էութեան՝ այդ ամէնը միանգամայն տրամաբանական են, քանի որ դրանք փաստօրէն, ոտատակի գորգեր էին, ու այդ պատճառով էլ, առաջին հերթին, կարեւորւում էր դրանց փափկութիւնն ու գործուածքի դիմացկունութիւնը:

Վրաց աղբիւրներում յիշատակուած վերոյիշեալ տապաստա բառի իմաստային բովանդակութեան մեկնաբանմանը վերջերս անդրադարձել է նաեւ պրոֆեսոր Պարոյր Մուրադեանը:[11] Խօսքը վերաբերում է Ն. Մառի յիշատակած նոյն՝ ԺԱ դարի 80-ական թթ. գրուած վաւերագրին, որում ներկայացուած է 1070-1080 թթ. ընթացքում Ռաչայի (հիւսիսարեւմտեան Վրաստան) Նիկորցմինդայի եկեղեցու առաջնորդի կողմից կատարուած գնումների ու ստացած նուիրատուութիւնների ցանկը: Դրանում ի թիւս այլ նշումների եկեղեցու առաջնորդը յիշատակում է, որ «Մետեխաբայում Դեբորիանի որդուց գնեցի մէկ գեղջուկ եւ նրա համար տուեցի մէկ նոր գորգ եւ մէկ կարպետ, հայկական երկու տաբաստա, շղթայ՝ մէկ, լաւ եզ՝ մէկ, թաղիքէ լաւ բարձ՝ մէկ, շղթայի շարան՝ մէկ: Եւ վկայ են մարդիկ»: Թարգմանութիւնը Պ. Մուրադեանը կատարել է 1897 թ. Թ. Դ. Ժորդանիայի հրատարակած տեքստից:[12]

Այս վաւերագիրը ուսումնասիրել ու 1907 թ. ընդօրինակել է նաեւ վրաց նշանաւոր աղբիւրագէտ Ս. Ս. Կակաբաձէն: Մենք օգտուել ենք 1982 թ. Մոսկուայում հրատարակուած տարբերակից, որտեղ հատուածն ունի հետեւեալ տեսքը՝ «Մետեխաբայում Դեբորիանի որդուց գնեցի մի գեղջուկ, որի դիմաց տուել եմ նոր գորգիկ՝ 1 եւ վերջին գորգիկ 1, հայկական անկողին՝ 2, զրահ՝ 1, լաւ եզ՝ 1, բարձ գորգիկի հետ միասին՝ 1, զրահի ուսամաս՝ 1 եւ կան սրա վկաները»[13]:

Բնագրի այդ երկու հրատարակումների գորգերին վերաբերող հատուածում կան որոշակի տարբերութիւններ: Այս պարագայում հարկ ենք համարում նշել, որ Ժորդանիայի տարբերակը հայերէն է թարգմանուած վրացերէնից, իսկ Կակաբաձէինը՝ ռուսերէնից, ուստի հնարաւոր տարընթերցումներ կարող էին անել ձեռագիրը հին վրացերէնից թարգմանողներն ու հրատարակողները, ինչպէս նաեւ այն ռուսերէն թարգմանողները: Հարկ ենք համարում նշել, որ այս տեքստում եղած «վերջին գորգիկ» հասկացութիւնը մեր համար անհասկանալի է, ու չկարողացանք գտնել դրա բացատրութիւնը:

Պ. Մուրադեանը, քննութեան առնելով հրատարակուած վաւերագրի Թ. Ժորդանիայի տարբերակն ու հետեւելով Արշակ Ալպոյաճեանի, Յարութիւն Քուրտեանի, ինչպէս նաեւ Ստ. Մալխասեանցի մեկնաբանումներին, եզրակացրել է, որ տապաստակը կաշուէ կամ կտաւէ սփռոց է, որի վրայ նստում են ուտելու ժամանակ:[14]

Յիշատակուած մեկնաբանութիւնների վերաբերեալ անհրաժեշտ ենք համարում ներկայացնել որոշ պարզաբանումներ: Վարդան Հացունին նշել է, որ տապաստակը «ազնիւ սփռոց է (տապաստ արկանելիք) բազմականին վրայ ձգուած՝ նման հռովմէական ճոխ պաստառաց, որ նոյն պաշտօնը կը վարէին...: Իսկ տապաստակաց վրայ կը դրուէին բարձերը»: Այս մեկնաբանութեան մէջ, ըստ իս, «ազնիւ սփռոց» եւ «հռովմէական ճոխ պաստառ» հասկացութիւնները բաւականին պարզորոշ ակնարկում են, որ խօսքն այստեղ վերաբերում է որեւէ գործուածքի՝ խաւով կամ անխաւ, ասեղնագործ կամ մէկ այլ

---

8 Տե՛ս Ա. Պօղոսեան, *Հայոց գորգագործական մշակոյթը* (պատմազգագրական ուսումնասիրութիւն), ատենախօսութեան աւտոռեֆերատ, Երեւան, 2003, էջ 16:

9 Օրբէլի Յ., *Անւոյ աւերակները: Պատմութիւն, այժմեան վիճակ, պեղումներ*, թարգ. ռուսերէնից եւ կազմեց Յուսիկ արքեպս., Վաղարշապատ, 1911, էջ 46:

10 Т. А. **Измайлова**, Армянская миниатюра XI века, Москва, 1979, ЭП.136:

11 **Պ. Մուրադեան**, *«Հայկական տապաստակին» վերաբերող ԺԱ դարի վրացերէն մի տեղեկութիւն*. «Հանդէս ամսօրեայ», Վիեննա-Երեւան, 2004, թիւ 1-12, էջ199-205

12 **Պ. Մուրադեան**, նշ. աշխ. էջ 200

13 *Грузинские документы 9-15 вв., в собрание Ленинградского отделения института востоковедения АН СССР*, перевод и комментарии С. Н. **Какабадзе**, Москва, 1982, ст. 39-47 /հետայսու Грузинские документы...: Փաստաթղթի բնօրինակը չի պահպանուել, ընդօրինակումն արել է Ս. Ս. Կակաբաձէն 1909 թ., այն պահւում է Վրաստանի պատմութեան պետական արխիւում: Ներկայ թարգմանութիւնն արուած է Ս. Ս. Կակաբաձէի աշխատանքային օրինակի եւ իր իսկ ընդօրինակման, ինչպէս նաեւ հետագայ բոլոր երեք՝ Ի. Ս. Դոլիձէի, Թ. Դ. Ժորդանիայի, Մ. Մ. Բերձենիշւիլու հրատարակումների հիման վրայ. այս մասին տե՛ս նոյն տեղում, էջ 44: Ի դէպ, այդ եկեղեցուն մէկ *գորգիկ* էլ 7 գիւղացիների եւ այլ առարկաների հետ միասին նուիրել է ոմն Ցիրկոլելու որդին. նոյն տեղում, էջ 39:

14 **Պ. Մուրադեան**, նշ. աշխ., էջ 203

տեսակի: Հարկ ենք համարում նաեւ նկատի ունենալ որ ասեղնագործ «ազնիւ սփռոցը» ոչ թէ առօրեայ գործածման, այլ հիմնականում գեղազարդման՝ դեկորատիւ բնոյթի առարկայի համարում է ունեցել: Ամէնօրեայ գործածման պարագայում ասեղնագործուած զարդերն ու նախշերը արագ քանդւում ու մաշւում են, եւ տուեալ գործուածքը կարճ ժամանակում կորցնում է իր տեսքը: Ուստի դրանք ոչ միայն չէին կարող գործածուել՝ որպէս ճաշկերոյթի սփռոց, այլ սովորաբար պահւում էին օժիտի սնդուկներում ու այդտեղից հանում ու օգտագործում էին միայն նշանակալից տօնածիսական իրադարձութիւնների ժամանակ:

Յ. Քուրտեանն, իր հերթին, գտնում է, որ «տապաստակը գորգին, բազմականին վրայ սփռուած ճաշի կաշիէ սփռոցն իսկ է, որ գորգին վրայ կը դրուէր, որուն շուրջ կը բազմէին ճաշակիցները՝ նստելով բազմոցներուն, բարձերու վրայ կամ ուղղակի գորգին վրայ, երբեմն կռնակնին տալով բարձի»[15]: Այսինքն՝ ի տարբերութիւն Վարդան Հացունու, «ազնիւ սփռոցի» փոխարէն այս դէպքում խօսքն արդէն գնում է կոնկրետ կաշուէ սփռոցի մասին, ուստի եւ, տուեալ պարագայում մենք գործ ունենք տապաստակին վերաբերող երկու տարբեր մեկնաբանումների հետ:

Ինչ վերաբերում է Ստ. Մալխասեանցին, ապա նա խնդրոյ առարկայ բառը, ինչպէս վերն ասուեց, բացատրում է սփռոց, գորգ, օթոց իմաստով ու նաեւ յաւելում՝ որի վրայ նստում են ուտելու ժամանակ:[16] Ըստ իս՝ այդքանից կարելի է եզրակացնել, որ խօսքն այստեղ դարձեալ վերաբերում է գործուածքի, եւ որ այն, ըստ երեւոյթին, պէտք է ունենար նեղ ու երկար տեսք:

Ընդհանրացնելով վերոյիշեալները՝ մենք գտնում ենք, որ արցախսիւնիքեան պատմամշակութային միջավայրում կենցաղավարած ուղեգորգերի գործածման ձեւը, ըստ էութեան, միջնադարեան հայոց կենցաղին բնորոշ աւանդոյթներից մէկի արտայայտութիւն է:

Խնդրոյ առարկայ հարցի պարզաբանման առումով, կարեւոր հանգամանք է նաեւ այն, որ ընդհանրապէս հայոց կենցաղում գորգն ունեցել է առանձնակի նշանակութիւն: Գորգն ի սկզբանէ ծիսապաշտամունքային առարկայ էր, իսկ միջնադարում արդէն համարւում էր վերնախաւային առարկայ, գործածւում էր միայն վերնախաւի կենցաղում, համարւում էր հարստութեան ու հասարակութեան մէջ ունեցած դիրքի չափանիշ:[17]

Անդրադառնալով հայոց կենցաղում, մասնաւորապէս՝ վերնախաւի կենցաղում կաշուէ սփռոց գործածելուն՝ հարկ է նշել, որ մեզ յայտնի չէ նման տեղեկութիւն պարունակող որեւէ գրաւոր սկզբնաղբիւր: Ընդհանրապէս, մեր մատենագրութեան մէջ, ինչպէս յայտնի է, չափազանց սակաւ են կենցաղն ու միջավայրը նկարագրող տեղեկութիւնները, եւ եղածներն էլ հիմնականում վերաբերում են սակաւակեաց հոգեւորականներին կամ ճգնաւորներին, որոնք գուցէ եւ նման պահանջների դէպքում գործածել են կաշուէ սփռոցներ: Այդ առումով, թերեւս, բացառութիւններից է Ժ-ԺԱ դդ. պատմիչ Արիստակէս Լաստիվերտցու գրի առած, իր ապրած ժամանակաշրջանին վերաբերող հայոց կենցաղի նկարագրութիւնները, որոնք, իրենց հերթին, հիմք են տալիս բացառելու այդ ժամանակաշրջանում կաշուէ սփռոցի առկայութիւնը վերնախաւի կենցաղում[18]:

Պէտք է ասել, որ խնդրոյ առարկայ վաւերագիրն էլ, իր հերթին, պարունակում է նաեւ այնպիսի տուեալներ, որոնք լրացնում են մեր կողմից վերն ասուածներն ու հնարաւորութիւն տալիս աւելի հիմնաւորել տապաստակի գործուածք լինելու տեսակէտը: Բանն այն է, որ Կակաբաձէի հրատարակած տարբերակում տարբեր անուանումներով ներկայացուած են անկողին (Ժորդանիայի մօտ՝ տաբաստո), գորգ, գորգիկ եւ կաշի հասկացութիւնները: Վաւերագրում յիշատակութիւն կայ ցլի կաշուի եւ աղուէսի մորթու մասին, ընդ որում, նշուած է, որ աղուէսի մորթին աստառապատուած, այսինքն՝ որոշակի մշակման է ենթարկուած:[19] Կարծում ենք, որ տապաստակը կաշուէ սփռոց նշանակելու դէպքում, թուարկուածները՝ ցլի կաշին, աղուէսի մորթին ու անկողին-տաբաստոն վաւերագրում կը ներկայացուէին միեւնոյն անուանումով: Վաւերագրում համապատասխան անուանումներով դրանց տարբերակուած լինելը վկայութիւն է առ այն, որ մենք գործ ունենք միանգամայն տարբեր իրերի հետ, եւ որ Նիկորցմինդայի եկեղեցու առաջնորդը իրարից յստակօրէն տարբերակել է կաշին, մորթին, գորգը, գորգիկը, տապաստակը եւ այլն:

Մեր կարծիքով, հակասական չէ, որ Մետեխարայի բնակիչ Դեբորիանի որդուց գնուած իրերի ցանկի խնդրոյ առարկայ երկու ուղեգորգ-տապաստակը Կակաբաձէն ներկայացրել է «երկու անկողին», իսկ Ժորդանիան՝ «հայկական երկու տաբաստա» տեսքով: Բանն այն է, որ, ինչպէս վերն արդէն նշուեց, տապաստակը հայոց կենցաղում գործածուել է նաեւ՝ որպէս թախտի փռոց, ու այդ առումով, անշուշտ կատարել է ներքնակի դեր, ուստի եւ կարող է համարուել նաեւ անկողնու հոմանիշ: Կարծում ենք, որ տապաստակի գորգ լինելու հարցում, ըստ երեւոյթին, որեւէ կասկած չունէր նաեւ ինքը Թ. Ժորդանիան: Նա իր հրատարակած վաւերագրի տերմիններին վերաբերող ծանօթագրութիւններում բացատրել է, որ «տաբաստան կամ տախաստանին թանկագին կարմիր կտորեղէն է, որը փռում էին թագաւորների ոտքերի տակ»[20]: Մեզ յայտնի չէ, թէ իրականում վրացերէն բնագրում ինչ է նշանակում «կտորեղէն» բառը, սակայն ամէն դէպքում, եթէ դա թագաւորների ոտքերի տակ է փռւում, ուրեմն խօսքն, առաջին հերթին, կարող է վերաբերել գորգին կամ նմանատիպ որեւէ հաստ ու ամուր գործուածքի: Այս պարագայում, սակայն, մենք կարեւորում ենք այն, որ Ժորդանիան չեշտել է դրա կարմիր լինելը: Դրանից հետեւում է, որ նա քաջատեղեակ էր արաբական գրաւոր այն սկզբնաղբիւրներին, որոնցում հայկական գորգերը տարբերակւում էին նաեւ «հայկական կարմիր» կամ ուղղակի «կարմիր» անուանումով, որ բացատրւում էր դրանց գունային երանգների թւում «որդան կարմիր» (արաբերէն՝ «կրմզ») ներկանիւթից ստացուած կարմիր գոյնի գերակշիռ առկայութեամբ:[21]

Վերն ասուածներն, ընդհանուր առմամբ, թոյլ են տալիս եզրակացնել, որ վրացական վաւերագրում խօսքը գնում է Ե-Զ դդ. հայերէն թարգմանական գրականութիւնից յայտնի «տապաստակ» տեսակի գորգերի մասին, որոնք արաբական աղբիւրներում տարբերակուած են ոտատակի գորգեր անուանումով ու Ը-ԺԳ դդ. մեծ քանակութեամբ գործւում էին Հայաստանի գորգագործական կենտրոններում, այդ թւում՝ Դուինում, Անիում, Կարինում եւ այլուր:[22] Ընդ որում, դրանք չպէտք է շփոթել աղօթքի գորգերի հետ, որովհետեւ վերջիններս վերոյիշեալ աղբիւրներում տարբերակուած են հէնց աղօթքի գորգ անունով:[23]

---

[15] Վ. Հացունուց եւ Յ. Քուրտեանից մէջբերումները քաղուած են Պ. Մուրադեանի նշուած յօդուածից. տե՛ս էջ 202:

[16] Պ. Մուրադեան, նշ. աշխ., էջ 203

[17] A. Mez, նշ. աշխ., էջ 365: Այս մասին տե՛ս նաեւ Ա. Պօղոսեան, *Գորգի ծիսապաշտամունքային նշանակութեան առթիւ*, «ՊԲՀ», թիւ 1, 2000, էջ 175-184:

[18] Արիստակէս Լաստիվերտցի, *Պատմութիւն*, թարգ.՝ Վ. Ա. Գեւորգեանի, Եր., 1971, էջ 33-34

[19] *Грузинские документы*…, էջ 41.

[20] Պ. Մուրադեան, նշ. աշխ., էջ 203

[21] A. Mez, նշ. աշխ., էջ 369

Ամփոփելով տապաստակի մասին մեր ասելիքը՝ նշենք նաեւ, որ վրացական ցեղերի միջավայրում գորգագործական մշակոյթն առհասարակ զարգացած չի եղել, ուստի, ինչպէս նկատել է Պ. Մուրադեանը, «քաղաքական ու պատմաշխարհագրական մերձութեան, ինչպէս նաեւ համաբնակ գաւառների ու քաղաքների առկայութեան պարագաներում հայոց այդ կարգի արտադրութիւնները ճանաչում պէտք է ունենային նաեւ հարեւան Վրաստանում»[24]:

---

[22] **A. Meg**, նշ. աշխ., էջ 365

[23] Նոյն տեղում

[24] **Պ. Մուրադեան**, նշ. աշխ., էջ 201

ՈՒԽՏԻ ԽԱՉ-ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐ

Աստղիկ Իսրայէլեան

Հայաստանի պատմութեան թանգարանում պահուող մետաղէ հմայական պահպանակներից մի քանիսը կոչւում են «ուրբաթարուր»: Ինչպէս նշւում է բացատրական բառարանում, «ուրբաթարուր» (կամ «ուրբաթարօր») բառի նշանակութիւնն է՝ «չար աչքի դէմ յուռութ, բաղկացած կիսալուսնաձեւ կամ խաչաձեւ մի կտոր երկաթից, որ շինել են տալիս դարբիններին (առանց խօսելու) աւագ ուրբաթ օրը լուսածագին եւ կարում են երեխաների գլխին կամ ուսին»[1]: Սակայն խաչաձեւ ու լուսնաձեւ հմայական պահպանակներ էին սարքում նաեւ արծաթից: Դեռ աւելին՝ տարբեր գործառոյթների հետ մէկտեղ արծաթէ խաչերը երկաթէ դողուրբաթարուրների, մատանիների, ապարանջանների եւ այլ առարկաների նման նաեւ սրբատեղիների գրաւների դեր էին կատարում:

Հայաստանի պատմութեան թանգարանի ազգագրութեան թիւ 1 պահոցում ուխտի գրաւի 7 խաչեր կան. բոլորը հաւասարաթեւ են եւ ակնազարդ: Պատրաստուել են ԺԸ դարում: Խաչերից միայն մէկն է անթերի պահպանուել (ՀՊԹ Ա[2]4898), միւսների կախիկներն են բացակայում, ակերը կամ նախշերից մի քանիսը պոկուած են:

Խաչերից ոչ մէկի ծագման վայրը չի նշուել դրանք ձեռք բերելիս: Յայտնի է միայն, որ սրանցից մէկը սասունցիները ժամանակին իրենց հետ Սասունից բերել են Թալինի Գետափ գիւղը (ՀՊԹ Ա 6845), մէկն էլ ալաշկերտցիները Ալաշկերտից բերել են Ստեփանաւանի Շահնազար գիւղը (ՀՊԹ Ա 5282):

Կատարման եղանակով ու ոճով իրար շատ նման են խաչերից հինգը (ՀՊԹ Ա 6845, 5278, 7247, 6842, 5282): Դրանք մետաղասարքուած են ձուլածոյ, պարզ թելի եւ զուգաթելի աշխատանքով, զարդարուած վերադիր գնդիկներով, մանր հատիկներով, ձգուած շեղանկիւնիներով եւ ապակէ ակերով: Միայն մէկն ունի մի մարջան եւ շղթայ (ՀՊԹ Ա 6845): Խաչերի կենտրոններն ընդգծուած են շրջանի կամ քառանկեան ձեւով, թեւերն աւարտւում են ոճաւորուած շուշաններով: Ընդհանուր ձեւով սրանց շատ նման են ԺԸ դարում եւ ԺԹ դարի սկզբին Սսում, Ադանայում, Ակնում պատրաստուած խաչերը, որ պահւում են Անթիլիասի Կիլիկեան թանգարանում:[3] Սակայն ուշագրաւ է, որ ԺԷ-ԺԸ դարում Արծկէում, Վանում եւ Վասպուրականի միւս բնակավայրերում պատրաստուած բազմաթիւ եկեղեցական առարկաներ, այդ թւում եւ՝ գրքերի արծաթէ կազմեր ու խաչեր՝ իրենց զարդանախշման մանրամասներով եւ կատարման տեխնիկայով (պահւում են Էջմիածնի Մայր տաճարի թանգարանում) շատ նման են ե՛ւ Կիլիկիայում պատրաստուած, ե՛ւ Հայաստանի պատմութեան թանգարանում պահուող նշուած 5 խաչերին: Այստեղից կարելի է ենթադրել, որ այդ խաչերը պատկանում են Վասպուրականի ոսկերչական դպրոցին: Հնարաւոր է, որ վասպուրականցի վարպետների աշխատանքները տա-

---

[1] **Ստ. Մալխասեանց**, *Հայերէն բացատրական բառարան*, հտ. III, Երեւան, 1944, էջ 612

[2] Հայաստանի պատմութեան թանգարանի ազգագրութեան բաժնի առարկաների անձնագրերի հերթական համարներն են:

[3] **H. Goltz, K. E. Göltz**, *Rescued Armenian Treasures from Cilicia*, 2000, p.116, 125.